ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/33

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Բողոք բերող՝ «Ատա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ատա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Մովսեսյանի, ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցում, մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ատա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 28.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի 24.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.02.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 02.03.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

06.03.2020թ.-ին և 27.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

06.03.2020թ.-ին Բողոքի քննությունն ավարտվել է և որոշման հրապարակման օր է նշանակվել 27.03.2020թ.-ին:

2. «Ատա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ատա» ՍՊԸ-ն 28.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (նշված ընթացակարգը չի վիճարկվում սույն բողոքով) գնահատող հանձնաժողովի 26.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով սահմանված պայմաններին /պահանջներին/, բացառությամբ «ԱՏԱ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված չէ ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքելու դեպքում պայմանագրի կատարումն իրականացնելու համար նախատեսված աշխատանքների քանակը: Նույն արձանագրության 2.4 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ

հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները, 30.09.2019թ. կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ ուղարկել լիազոր մարմին:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 11.10.2019թ. ՊՆ/02/2102-2019 գրությունով (կցվում է) ներկայացրել է «ԱՏԱ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.10.2019թ. ՊՆ/02/2102-2019 գրության հիման վրա, 14.10.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի վարույթում նախաձեռնել է թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 պաշտոնական ընթացակարգը՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով:

«ԱՏԱ» ՍՊԸ-ն 05.11.2019թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2.4 կետով կայացրած որոշումը անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ: Որպես հայցի ապահովման պահանջ՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ն դատարանից խնդրել է արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (www.datalex.am hamaka8gic համապատասխան արտապումը կցվում է):

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ. կայացրած <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին>> որոշմամբ (կցվում է) որոշել է. <<Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել: Արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման>> (Հարկադիր կատարման ծառայության համապատասխան փաստաթղթերը):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանը 13.11.2019թ.-ին կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ (կցվում է) բավարարել է «ԱՏԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը և «ԱՏԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով (որոշումը հրապարակվել է gnumner.am համացանցային կայքում 15.11.2019թ.):

Այնուհետև, Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «ԱՏԱ» ՍՊԸ-ն:

«ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.02.2020թ. ժամը 10:00-ին մերժել է «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու պատճառով:

Ընկերության կողմից ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ. կայացրած <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին>> որոշումը և ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի

կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը, սակայն հայտը մերժելու որոշումը գնահատող հանձնաժողովի կողմից չի վերանայվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական ակտի և դատարանի պահանջների չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Հայտնում ենք, որ «ԱՏԱ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 13.11.2019թ. կայացրած թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ, որը հրապարակվել է www.gnumner.am կայքում 15.11.2019թ.:

Վերոնշված որոշման դեմ 05.11.2019թ. «ԱՏԱ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որով Դատարանին խնդրել է՝ անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հանձնաժողովի նիստի թիվ 5

արձանագրության 2.4 կետով կայացրած որոշումը՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի տվյալները լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, ներկայացնելու վերաբերյալ՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի վարույթում ընթացակարգ նախաձեռնելու համար:

Միևնույն ժամանակ հայցադիմումի հետ ներկայացվել է հայցի ապահովում, որով Դատարանին միջնորդել էինք արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ. կայացրած <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին>> որոշմամբ (կցվում է) որոշել է. <<Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել: Արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ընկերության կողմից Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ. կայացրած <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին>> որոշումը և ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը:

Ստացվում է մի իրավիճակ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 15.11.2019թ. կայացրած որոշմամբ արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ

գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, սակայն «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Դատարանի կողմից արդեն իսկ կասեցված (փաստացիորեն արդեն չգործող) որոշումը՝ մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, թե «ԱՏԱ» ՍՊԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, ակնհայտ է, որ եթե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 15.11.2019թ. կայացրած որոշմամբ արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, մինչդեռ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանը 13.11.2019թ. ընդունված ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ, որը հրապարակվել է 15.11.2019թ. «ԱՏԱ» ՍՊԸ-ին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով: Այսպիսով այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Լ. Օհանյանը 13.11.2019թ. ընդունված ՍՑ-ԼՕ-2019/175 որոշումը ուժի մեջ է մտել այն ժամկետում (17.11.20192.), երբ առկա է եղել դատական ակտ՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգը կասեցնելու մասին, իսկ տվյալ որոշումը, և որոշման ուժի մեջ մտնելը հանդիսանում է ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգի փուլերից մեկը:

Այսպիսով, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Դանիելյանի կողմից 15.11.2019թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ այն է 15.11.2019., և այն ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ. կայացրած որոշման և վերոհիշյալ որոշման առկայության, ինչպես նաև դրանց մասին իրազեկված լինելու պայմաններում «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ

հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում:

Վերոհիշյալը ոչ իրավաչափորեն հանգեցրել է «ԱՏԱ» ՍՊԸ-ի Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման սահմանափակմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. Արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Ատա» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի 24.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.03.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3184-2020 գրությամբ դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ատա» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստերին, 05.03.2020թ.-ին թիվ Մ-8903-2020 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից սույն թվականի փետրվարի 17-ին կազմակերպվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35 ծածկագրով մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման գնման ընթացակարգ: Հայտեր են ներկայացրել թվով 2 մասնակից՝ «ԱՏԱ» ՍՊԸ-ն և Երևանի Ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն:

«ԱՏԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և 34-րդ հոդվածի 6-րդ մասը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով 17.02.2020թ.-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ատա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Ատա» ՍՊԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նույն արձանագրության 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, «Ատա» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 13.11.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ «Ատա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարվել է և Ընկերությունը ընդգրկվել է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

13.11.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 15.11.2019թ.-ին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին 15.11.2019թ.-ին կայացված որոշման «Ատա» ՍՊԸ-ի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է և դատարանը որոշել է արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «Ատա» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին և պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին որոշումները կայացվել են 20.11.2019թ.-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ատա» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ի ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ընդ որում՝ վերջիններս այդ ցուցակում պետք է ներառված լինեն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, որպիսի պայմաններում, այդ հիմքով, գնահատող հանձնաժողովը պետք է ներկայացված հայտը գնահատի անբավարար և մերժի այն:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մեդալների և մեդալների տուփերի ձեռքբերման նպատակով 17.02.2020թ.-ին հայտարարված թիվ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ատա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 13.11.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.02.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Ատա» ՍՊԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Եվ նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, «Ատա» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 13.11.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշմամբ «Ատա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարվել է և Ընկերությունը ընդգրկվել է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

13.11.2019թ.-ին կայացված թիվ ՍՑ-ԼՕ-2019/175 որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 15.11.2019թ.-ին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին 15.11.2019թ.-ին կայացված որոշման «Ատա» ՍՊԸ-ի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է և դատարանը որոշել է արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «Ատա» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին և պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին որոշումները կայացվել են 20.11.2019թ.-ին:

Սույն գործերի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրակացնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին 15.11.2019թ.-ին կայացված որոշման մասին Բողոքներ քննող անձն իրազեկվել է 20.11.2019թ.-ին՝ ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու մասին և պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին կայացված որոշումների հիման վրա, որպիսի պայմաններում թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ.-ին կայացված որոշման կատարումը մինչև 20.11.2019թ.-ը հնարավոր չէր ապահովել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ բողոքի քննության ընթացում բողոքաբերի կողմից չի ներկայացվել ապացույց այն մասին, որ դատարանի վերոնշյալ որոշումը Բողոքներ քննող անձին կողմից ստացվել է մինչև 20.11.2019թ.-ը,

որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ արձանագրել պարտադիր որոշման չկատարման փաստի ու դրանից բխող որպես իրավական հետևանք նախատեսված արգելքները խախտելու համար դատարանի որոշմամբ դատական տուգանքի նշանակման մասին:

Ընդ որում՝ պետք է փաստել, որ վերը նշված որոշմամբ դատարանը որոշել է արգելել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին՝ ՍՑ-ԼՕ-2019/175 ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «Ատա» ՍՊԸ-ին «Գնումներին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով, որը ոչ մի կերպ չի կարող հանգեցնել արդեն իսկ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված մասնակցին այդ ցուցակից հեռացնելուն:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովի կողմից թիվ ԵԴ/37876/02/19 քաղաքացիական գործով 15.11.2019թ.-ին կայացրած որոշման մասին իրազեկված լինելու պայմաններում «Ատա» ՍՊԸ-ի հայտը մերժելը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-20/35» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և Մասնակցի հայտը անբավարար գնահատելով ու ապա մերժելով՝ ապահովել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ատա» ՍՊԸ-ի կողմից 28.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/33 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ